

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԽՈՋԱԲԵԿ ԳՅՈՒՂՈՒՄ

Չնայած հետխորհրդային շրջանի ցնցումներին և առաջացող բարդություններին, հոգևոր վերազարթոնք է ապրում նաև Զավախքը, որի գեղեցիկ վկայություններից մեկին էլ Խոջաբեկ գյուղի հիմնադրման 165 և Ս. Սարգիս եկեղեցու կառուցման 110-ամյակներին նվիրված հանդիսությունն էր, որը տեղի ունեցավ օգոստոսի 13-ին: Այն կազմակերպվել էր՝ գործակցությամբ Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Եղիա քահանա Թազայանի և տեղական իշխանությունների, որին իր մասնակցությունը բերեց՝ խոջաբեկցիների հրավերով այնտեղ գտնվող և Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի հայրապետական օրհնություններն ու ողջույնները խոջաբեկցիներին փոխանցելու կոչված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Սեպուհ վարդապետ Զուլջյանը, ում էլ ընկերակցում էին հոգևոր ճեմարանի 6-րդ լսարանի սաներ Հայկ Գամաղելյան և Տիգրան Սանոյան դպիրները:

Տեղի եկեղեցու կառուցումը ավարտվել է 1884 թ.: 1895 թ. Վիրահայոց թեմում հովվական այցելությամբ գտնվող Մկրտիչ Խրիմյան Կաթողիկոսն այցելել է նաև Խոջաբեկի Ս. Սարգիս եկեղեցի: Խորհրդային տարիներին եկեղեցին վերածվել է պահեստի ու չի ծառայել իր նպատակին մինչև 1993 թ. նոյեմբերի 13-ը, երբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը կատարեց վերաբացման և օծման արարողությունը: Եկեղեցին այժմ բարեկարգ վիճակում է, որին իրենց նպաստն են բերել տեղական իշխանությունները:

Ս. Սարգիս եկեղեցում գոհաբանական աղոթք մատուցելուց հետո, Սեպուհ վարդապետն այցելեց նաև շրջկենտրոնից 5 կմ հեռավորության վրա գտնվող Սաթխա գյուղի Ս. Մեծն Ներսես եկեղեցի, որը 19-րդ դարի կառույց է և այժմ վերանորոգվում է գյուղացիների կողմից:

Օգոստոսի 13-ին, կիրակի առավոտյան ժ. 10.30-ին, Խոջաբեկի Ս. Սարգիս եկեղեցում սկսվեց ս. պատարագը: Պատարագիչն էր Սեպուհ վարդապետը, վերաբերում կատարողը՝ Եղիա քահանան:

Մեծաթիվ խոջաբեկցիներ էին հավաքվել եկեղեցում: Նրանք երկյուղածությամբ էին հետևում ս. պատարագի սրբազան արարողությանն ու իրենց աղոթքներով մասնակից դառնում Ս. Խորհրդի կատարմանը: Պատարագի ընթացքում քարոզեց Հայր Սուրբը: Հայտնելով իր առաքելության նպատակի մասին, մասնավորապես ասաց, որ եկել է գյուղի հիմնադրման 165 և Ս. Սարգիս եկեղեցու կառուցման 110-ամյակների կապակցությամբ Վեհափառ Հայրապետի առատաշնորհ օրհնություններն ու ջերմ ողջույնները փոխանցելու հայ ժողովրդի մի մասնիկին՝ Զավախք աշխարհին, և

մասնակցելու այդ առթիվ տեղի ունենալիք հանդիսությանը: Մեպուհ վարդապետը հորդորեց խոջաբեկցիներին՝ անսասան մնալ իրենց հավատքի մեջ, հետու մնալ և զգուշանալ գառան մորթով հանդես եկող գայլերից, արթուն մնալ և զորանալ ի Քրիստոս հավատքով, պատրաստ լինել՝ արժանիորեն հակազդելու իրենց հոգու անդորրությունը խանգարել ցանկացողներին, թույլ չտալ օտարածին և հայ առաքելականությանը խորթ տարրերին զբաղվել մանուկների միտքը խմորելով:

Հավարտ արբո պատարագի, պատարագիչ Հայր Սուրբը կատարեց հոգեհանգիստ՝ Խոջաբեկ գյուղը կառուցողների և գյուղի բարգավաճմանը նպաստած անձանց, եկեղեցին կառուցողների ու եկեղեցում Տիրոջ սպասավորությունը իրենց ուսերին տարած հոգևորականների հոգիների խաղաղության և երկնքի արքայությանը արժանանալու համար:

Պատարագից հետո գյուղացիների հետ շարժվեցինք դեպի Ղարաչա կոչվող ուխտատեղին, որտեղ կար մատուռ՝ գյուղացիների ջանքերով վերանորոգված 1985-ին:

Գյուղական իշխանությունները այստեղ կազմակերպել էին հանդիսություն բաց երկնքի տակ: Եվ թեև ամպամած եղանակ էր, հազարավոր ուխտավորներ էին հավաքվել: Այստեղ ելույթ ունեցան կոլտնտեսության նախագահ պրն. Ա. Արզումանյանը, բանաստեղծ Ռ. Ղարսլյանը, «Արշալույս» թերթի խմբագիր պրն. Մ. Կարախանյանը և ուրիշներ: Բանախոսները, շնորհավորելով համագյուղացիներին, տեղեկություններ էին հաղորդում գյուղի պատմության վերաբերյալ և ընդհանուր ուրվագծերն էին ներկայացնում նրա անցյալի, ներկայի և ապագա անելիքների ու հոգսերի:

Մեծաթիվ խոջաբեկցիներին ու հյուրերին կրկին ողջունեց Մեպուհ վարդապետը: Հայր Սուրբը կոչ արեց ջավախքցիներին վրաց ժողովրդի հետ համատեղ պայքարել՝ երկիրը տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու, ժողովրդավարական կարգեր հաստատելու համար: Ասելով, թե այնժամ Աստված կօրհնի ջավախքցիներին ու իրենց հողը:

Օգոստոսի 13-ը տոն էր խոջաբեկցիների համար, և այդ օրվա քաղցր տպավորությունները թափանցեցին մեր հոգու խորքերը՝ երջանիկ հուշեր պարգևելով մեզ:

ՏԻԳՐԱՆ ՍԱՆՈՍՅԱՆ
Հոգևոր ճեմարանի 6-րդ լսարանի ուսանող